ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1965 Общественные науки

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 23—24-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որը քննարկեց ակադեմիայի 1964 թ. գործունեության արդյունքները, ընտրեց ակադեմիայի նոր ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ։

Ժողովը ներածական խոսքով բացեց ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։ Նա հանրագումարի բերելով հաշվետու ժամանակաշրջանում ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկների կատարած աշխատանքները, կանգ առավ հանրապետությունում գիտության զարգացման նոր խնդիրների վրա։

— ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդների ընտանիքում, — ասաց նա, — մեր հանրապետության աշխատավորները անցած տարի մեծ հաջողությունների հասան ժողովրդական տնտեսության ու մշակույթի բոլոր բնագավառներում։

Հայաստանի Կոմկուսի կենտկոմը, կառավարությունը, ամբողջ ժողովուրդը մեծ ուշադրություն են դարձնում գիտության զարգացմանը, այն համարում հանրապետության առաջընթացի կարևոր նախապայմաններից մեկը։ Ստեղծվում են նոր գիտական հիմնարկներ, ժամանակակից բարդ կայանքներ, պատրաստվում նոր կադրեր։ Բավական է ասել, որ 1958 թ. հետ համեմատած Հայաստանում գիտական աշխատողների թիվը ավելի քան կրկնապատկվել է և այժմ անցնում է 7 հազարից։

Լուրջ աշխատանքներ են կատարվել գիտության նվաճումները ժողովրդական տնտեսությանը ծառայեցնելու ուղղությամբ։ Առանձին տնտեսությունների զարգացման բնագավառում զգալի հաջողությունների են հասել մաթեմատիկոսները ու մեխանիկները, քիմիկոսները ու կենսաբանները։ Հաշվողական կենտրոնում աշխատանքներ են կատարվել մաթեմատիկական լեզվաբանության և մեխանիկական թարգմանությունների ուսումնասիրման ուղղությամբ։ Այս տարի պատրաստ կլինի մասնագիտացված թարգմանական առաջին էլեկտրոնային մեքենան, որը հնարավորություն կտա որոշ տեքստեր ռուսերենից թարգմանել հայերեն։

Բյուրականի աստղադիտարանում հետազոտություններ են սկսվել աստրոֆիզիկայի բոլորովին նոր բնագավառում՝ գալակտիկաների կորիզների ուսումնասիրման ուղղությամբ։ Կատարված են գալակտիկաների հետաքրքիր լուսաչափական ու գունաչափական հետազոտություններ։

Պրեզիդենտ Վ. Համբարձումյանը նշեց նաև այն, որ գիտնականները առայժմ քիչ են շոշափում հանրապետության էկոնոմիկայի համար կարևոր նշանակություն ունեցող պրակտիկ հարցեր։ Այսպես, Հայաստանի մեծագույն հարստություններից մեկը մոլիբդենն է, բայց մենք դեռ չենք հասել այդ արժեքավոր մետալի ռացիոնալ ու արդյունավետ օգտագործմանը։

Վ. Համբարձումյանը խոսելով կենսաբանական գիտության մասին, նշեց, որ չնայած Լիսենկոյի խումբը զգալի վնաս հասցրեց մի շարք կարևոր ճյուղերի զարգացմանը, Հայաստանի գիտությունների ակադեմիայում որոշակի աշխատանքներ տարվեցին ագրոքիմիայի բնագավառում։ Բույսերի անհոդ աճեցման վերաբերյալ ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական նշանակություն, այլև գործնական արժեք։ Այն կարող է կիրառվել բանջարեղենի մի շարք տեսակների վաղ աճման, վիտամիններով հարուստ կերի ստացման համար։ Ակադեմիայում արդեն միջոցներ են ձեռնարկված կենսաբանական ժամանակակից ուղղությունների զարգացման համար։

Գիտությունների ակադեմիայի 1964 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետվությունը ցույց տվեց, որ գիտահետազոտական հիմնարկները կենսագործելով կուսակցության ու կառավարության որոշումները, 1964 թ. ընթացքում կատարել են զգալի աշխատանք։ Ակադեմիայի բոլոր 5 բաժանմունքների (ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական, քիմիական, երկրի մասին, կենսաբանական, հասարակական գիտությունների) մեջ մտնող 25 գիտահետազոտական հիմնարկների 1964 թ. գիտական գործունեությունը ընթացել է ՍՍՌՄ Մինիստրների սովետի, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի և ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի կողմից հաստատված 80 պրոբլեմների գծով, որոնք ընդգրկում են 363 թեմա։

Ակադեմիայի 1964 թ. գործունեության հաշվետվության շուրջը ծավալվեց մտքերի լայն փոխանակություն։

— Չնայած իր գոյության կարճ ժամանակին, — իր ելույթում ասաց ակադեմիկոս Ա. Նալբանդյանը, — քիմիական ֆիզիկայի լաբո-

լաստորիան ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ համատեղ մշակեց տեսական և պրակտիկ նշանակություն ունեցող պրոբլեմներ, տպագրեց 20-ից ավելի գիտական հոդվածներ։ Այժմ լաբորատորիայում աշխատանքներ են տարվում լոցերում շղթայական ռեակցիաների ուսումնասիրման ուղղությամբ։ Նախատեսված է ուսումնասիրություններ կատարել բնական և հարակից նավթագազերի թթվեցման մեխանիզմի և կինետիկայի ուղղությամբ։

Ակադեմիկոս Ա. Կարինյանի ելույթը նվիրված էր հասարակական գիտությունների բաժանմունքի գիտահետազոտական հիմնարկների գործունեության արդյունքին։

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը խոսելով հայագիտության զարգացման մասին, առաջարկեց հայագիտական կոնգրես կազմակերպելու անհրաժեշտության հարցը։ Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հ. Բատիկյանն իր ելույթում ընդգծեց, որ ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկների կապը թույլ է բուհերի հետ։ Ակադեմիայի փոխ-պրեզիդենտ Հ. Բունիաթյանը իր ելույթը նվիրեց գիտական հիմնարկների բաղաների շինարարությանը, ընդգծելով, որ գիտության զարգացման արդի խնդիրները պահանջում են արագացնել շինարարության տեմպերը։ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Բ. Առաքելյանը իր ելույթում բացահայտեց գիտական կադրերի պատրաստման գործում եղած թերությունները։

Քննարկվող հարցերի շուրջը ելույթներ ունեցան նաև ակադեմիկոսներ Ա. Ղարիբյանը, Ի. Եղիազարովը, Ա. Առաքելյանը, թղթակից-անդամներ Ա. Բարայանը, Վ. Թառայանը։

Ակադեմիայի ընդհանուր ժողովում լսվեցին նաև գիտական զեկուցումներ։ «Անիզոտրոպ շերտավոր թաղանթների ժամանակակից հարցերը» թեմայով զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ս. Համբարձումյանը, «Ակադեմիկոս Ն. Յա. Մառը՝ սովետական ականավոր գիտնական (ծննդյան հարյուրամյակի առթիվ)» թեմայով՝ ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղարիբյանը, «Բարձրակարգ բույսերի ծերացումը» թեմայով՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Վ. Ղազարյանը։

Ընդհանուր ժողովը ընտրեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նոր ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ։

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ ընտրվեցին Ստեփան Զորյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը (գրականագիտություն), Նորայր Սիսակյանը (բույսերի բիոքիմիա), Սերգեյ Համբարձումյանը (մեխանիկա)։

Ակադեմիայի նորընտիր թղթակից-անդամներ ընտրվեցին Ռաֆայել Այնքսանդրյանը և Այնքսանդր Թալալյանը (մաթեմատիկա), Գրիգոր Գուրզադյանը և Բենիամին Մարգարյանը (աստրոֆիզիկա), Գուրգեն Սահակյանը (տեսական ֆիզիկա), Գեղեոն Ավագյանը (կիսահաղորդիչների էլեկտրոնիկա), Հովհաննես Զալթիկյանը (ֆիզիկական քիմիա), Աշոտ Ասլանյանը (երկրաբանություն), Վահան Ղազարյանը (բույսերի ֆիզիոլոգիա), Գևորգ Դարիրջանյանը (ՍՄԿՊ պատմություն), Արամ Ղանալանյանը (գրականագիտություն), Վազգեն Զալոյանը (փիլիսոփայություն)։

Ընտրվեցին նաև ակադեմիայի արտասահմանյան անդամներ՝ բիոքիմիկոս Մանասե Սեվակը (ԱՄՆ) և հայագետ Սիրարփի Տեր-Ներսիսյանը (Ֆրանսիա)։

Ժողովը ակադեմիայի փոխ-պրեզիդենտ ընտրեց ակադեմիկոս Մ. Ներսիսյանին։ Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար և ակադեմիայի նախագահության անդամ ընտրվեց Ս. Երեմյանը։

Ակադեմիայի ընդհանուր ժողովին մասնակցում էին ՀԿՊ Կենտկոմի երկրորդ քարտուղար Հովհ. Բաղդասարյանը և ՀՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը։

* * *

ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԺՈՂՈՎԸ

1964 թ. մարտի 20-ին տեղի ունեցավ ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովը։ Բաժանմունքի գիտահետազոտական հիմնարկների 1964 թ. գործունեության մասին զեկուցեց բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։

Զեկուցողը նշեց, որ բաժանմունքի գիտահետազոտական հիմնարկները զգալի աշխատանք են կատարել 1964 թ. գիտահետազոտական պլանների կատարման գործում։ Բաժանմունքի գիտական կոլեկտիվները գիտահետազոտական ուսումնասիրություններ են կատարել 135 թեմա-առաջադրանքների ուղղությամբ։

Տնտեսագիտության ինստիտուտը 1964 թ. զբաղվել է արտադրական ուժերի տեղաբաշխման, ժողովրդական տնտեսության պլանավորման, նրա աշխատանքային ու նյութական ռեսուրսների առավել նպատակահարմար օգտագործման խնդիրներով։ Ինստիտուտի կոլեկտիվի ուսումնասիրած կարևոր թեմաներից են «Հանրային տնտեսության մեջ բնակչության զբաղվածության բարձրացման հիմնական ուղղությունները 1966—1970 թվականներին», «Կապիտալ ներդրումների տնտեսական էֆեկտիվության բարձրացման ուղիները ՀՍՍՌ արդյունաբերության հիմնական ճյուղերում», «Նյութական շահագրգռվածությունը և գյուղատնտեսական արտադրության եկամտաբերության բարձրացումը» և այլն։

Պատմության ինստիտուտը հաշվետու տարում շարունակել է աշխատանքը հայ ժողովրդի բազմադարյան պատմության ուսումնասիրման ուղղությամբ։ Ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներն ընթացել են հետևյալ պրոբլեմների գծով՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, սոցիալիստական և կոմունիստական շինարարության պատմության, կապիտալիստական հասարակարգի գենեզիսի և պատմության, ստրկատիրական հասարակության պատմության, ֆեոդալական հասարակարգի գենեզիսի և պատմության ու Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ուղղությամբ։ Հիմնականում ավարտված է բազմահատորյակի առաջին հատորի խմբագրումը, շարադրված է երկրորդ հատորի նշանակալից մասը, հիմնականում ավարտված է երրորդ հատորի շարադրանքը, խմբագրվում է չորրորդ հատորը։

1964 թ. ավարտված թեմաների շարքում են «Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում», «Հայկական ՍՍՌ տեխնիկական ինտելիգենցիայի կազմավորումը և զարգացումը», «Ազգային ազատագրական շարժումը Արևմտյան Հայաստանում», «Հայաստանի և հարևան երկրների պետական կարգը հելլենիստական ժամանակաշրջանում» և այլ թեմաներ։ 1964 թ. ինստիտուտը հրատարակել է Լ. Խուրշուդյանի «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում», Վ. Հակոբյանի «Կանոնագիրք հայոց», Վ. Միքայելյանի «Ղրիմի հայկական գաղութի պատմությունը», «Գիրք հերոսների մասին» (հեղինակների կոլեկտիվ) և այլ աշխատություններ։

Հաշվետու տարում զգալի աշխատանքներ են կատարել նաև Մ. Աբեղյանի անվան գրականության և Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտները։ Այդ ժամանակաընթացքում գրականության ինստիտուտի կոլեկտիվի կատարած գիտահետազոտական ուսումնասիրությունները հիմնականում ընթացել են արդի ժամանակաշրջանում հայ գրականության զարգացման օրինաչափությունների, մարքս-լենինյան գրականության, պոետիկա և գեղարվեստական գրականության ոճաբանության, հայ նոր գրականության, հայ հին և միջնադարյան գրականության, գրական կապերի, հայ պարբերական մամուլի պատմության պրոբլեմների ուղղությամբ։

Լեզվի ինստիտուտը 1964 թ. հրատարակել է Գ. Ջահուկյանի «Հայասա լեզուն և նրա առընչությունը հնդեվրոպական լեզուների սիստեմում», Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսություն» (2-րդ հատոր), Է. Աղայանի «Գրաբարի գիտական քերականություն» (1-ին դիրք), Ս. Էլոյանի «Ածանցները ժամանակակից հայերենում», Ռ. Բաղրամյանի «Շամախիի բարբառը», «Լեզվի և ոճի հարցեր» ժողովածուի երկրորդ հատորը և այլ աշխատություններ։

Ժողովում նշվեց հնագիտության և ազգագրության ինստիտուտի, արևելագիտության, փիլիսոփայության և իրավունքի սեկտորների գրական աշխատանքը գիտահետազոտական մի շարք կարևոր թեմաների մշակման գործում։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում մեծ տեղ են գրավում արշավային-դաշտային աշխատանքները։ Հաշվետու ժամանակում կատարվել են էնեոլիթի և բրոնզե դարյան, ուրարտական, հին Հայաստանի (անտիկ շրջան), Հայաստանի միջնադարյան հուշարձանների, Արինբերդի, Նոր Արմավիրի, Հին Արմավիրի, Դվինի պեղումները։ Իսկ ազգագրության ինստիտուտի գիտաշրջավախմբերը շարունակել են Հայկական ՍՍՌ սահմաններից դուրս գտնվող հայերի ազգագրական ուսումնասիրությունը և այլ աշխատանքներ։

Արևելագիտության սեկտորում աշխատանքներ են ծավալվել ազգային ազատագրական և բանվորական շարժումների, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ներքին և արտաքին քաղաքականության, կուլտուրայի պատմության, քրդագիտության ուղղություններով, ինչպես նաև արևելյան սկզբնաղբյուրների պատրաստման ու հրատարակման գործում։

Փիլիսոփայության և իրավունքի սեկտորի գիտնականների ուշադրությունն ուղղված է եղել սոցիալիզմի զարգացման և կոմունիզմին անցման օրինաչափությունների, դիալեկտիկական մատերիալիզմի և բնության փիլիսոփայության, բուրժուական գաղափարախոսության քննադատության, մարքս-լենինյան էսթետիկայի պրոբլեմների, հայ փիլիսոփայության պատմության, պետության և իրավունքի հարցերի ուսումնասիրման։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ակադեմիկոսներ Ա. Կարինյանը, Ա. Ղարիբյանը, պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գալոյանը, փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ, գիտության վաստակավոր գործիչ Հ. Ասլանյանը, արևելագիտության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Ինհիկյանը և պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանը։

Ժողովի մասնակիցները լսեցին բանասիրական գիտությունների դոկտոր Խ. Սարգսյանի «Ակադեմիկոս Մ. Աբեղյանի գիտական ժառանգությունը (ծննդյան հարյուր ամյակի առթիվ)», ակադեմիկոս Ա. Առաքելյանի «Արդյունաբերության հիմնական ֆոնդերի օգտագործման բարելավման պրոբլեմները» թեմաներով զեկուցումները։